Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն
2025, Vol. 16, No. 3(48), հոկտեմբեր, 18-31
https://doi.org/10.46991/BYSU.E/2025.16.3.018

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔ. ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

ԳԱԳԻԿ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ՝
Երևանի պետական համալսարան

Քաղաքակրթությունն աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, վտանգավոր մի եզրագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը մարդու համար կարող է ճակատագրական լինել: Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն: Իրականության փոխարեն ձևավորվում է գերիրականություն (հիպերռեալություն) կամ վիրտուալ իրականություն, որտեղ էական չէ, թե ինչն է իրական, ինչը՝ ոչ: Կյանքը մշտապես ծավալվում է որպես իրականության բնագրի բացակայությունը թաքցնող կեղծանմանակումների ու պատրանքների արարման սահմանազանցական շարժ: Հոգևոր արժեքներն աստիճանաբար կերպարանափոխվում են և դառնում ապրանքների խորհրդանիշային պատկեր: Ձևավորվում է նեղ, սահմանափակ հայացքների ու ձգտումների տեր մարդկանց նոր խավ, որոնց համար նույնականացման հիմնական չափանիշ է դառնում բրենդը: Մարդը հրաժարվում է հեռահար նպատակներից, ինչը, պարզունակացնելով գոյությունը, հանգեցնում է կյանքի էկզիստենցիալ արժեզրկմանը: «Գործարքն» ավելի է կարևորվում, քան դրա համար վճարվելիք էկզիստենցիալ գինը: Հոդվածում արվում է եզրահանգում, որ քաղաքակրթական արդի փոխակերպումների պայմաններում էկզիստենցիալ ամբողջականությունը պահպանելու համար անհրաժեշտ է հրաժարվել բացարձակ էվոլյուցիոնիզմի մտասևեռումից ու սահմանափակելով լինելությունը՝ հանուն բնականի (մարդու հոգևոր, մարմնական ամբողջականություն) ու արհեստականի (վիրտուալ իրականություն, արհեստական ինտելեկտ) համազարգացման (կոէվոլյուցիայի) գիտակցական ջանքեր գործադրել՝ հօգուտ էկզիստենցիալ կեցության ամբողջականության պահպանման:

Բանալի բառեր – *սպառողական հոգեկերտվածք, մարմին, կեղծանմանակ, վիրտուալ իրականություն, սիմուլյացիա, գերիրականություն, զանգվածային մշակույթ, էկզիստենցիալ գին*

՝ **Գագիկ Սողոմոնյան –** փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոնի դոցենտ

Гагик Согомонян – кандидат философских наук, доцент кафедры социальной философии, этики и эстетики ЕГУ

Gagik Soghomonyan – Candidate of Philosophical Sciences, Associate Professor at the Chair of Social Philosophy, Ethics and Aesthetics YSU

Էլ. հասցե՝ gagiksoghomonyan@ysu.am https://orcid.org/0000-0002-1408-6082

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 26.06.2025
Գրախոսվել է՝ 07.07.2025
Հաստատվել է՝ 24.10.2025
© The Author(s) 2025

Մեր ապագան մի մրցավազք է մեր հարաճուն տեխնոլոգիական հզորության և մեր իմաստնության միջև: Եկեք այնպես անենք, որ հաղթանակի իմաստնությունը:

Սթիվեն Հոքինգ

Աշխարհն այլևս նախկինը չէ: Ներկայում ընթացող քաղաքակրթական փոխակերպումները որակապես այլափոխում են մարդկային կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտները՝ ստեղծելով նոր իրողություններ, անհատական և հանրային կյանքի կազմակերպման նոր սկզբունքներ, արժեքային այլ գերակայություններ, որոնք էապես ազդում են մարդու էկզիստենցիալ ինքնազգացողության և սոցիոմշակութային կյանքի կանոնակարգման ընթացքի վրա: Տեխնոլոգիաների սրընթաց զարգացման, ինտելեկտուալ բարդ աշխատանքի աննախադեպ ծավալի աճի և անհատական ազատության շրջանակների շարունակական ընդլայնման հետևանքով աստիճանաբար փոխակերպվելով՝ մարդը թևակոխում է գոյության ու գործառության նոր՝ ավանդականից զգալիորեն տարբեր՝ հետմարդու ժամանակաշրջան: Ըստ էության, համաքաղաքակրթական իմաստով անցումային մի ժամանակաշրջան, որին բնորոշ է անցումը բնականից արհեստականին, արդիականից՝ հետարդիականին: Տեղի են ունենում սոցիումի քաղաքակրթական հիմունքների արմատական փոփոխություններ: Քաղաքակրթությունն աստիճանաբար մոտենում է գայթակղություններով լեցուն, սակայն խիստ վտանգավոր մի եզրագծի, որից անդին չվերահսկվող ուժերի ազդեցությունը մարդու համար կարող է ճակատագրական լինել: Մարդկությունն իր գիտատեխնիկական մտքի հաղթանակի, բնության ուժերի վրա իր օրավուր աճող իշխանության հետևանքով կանգնել է ինքնաոչնչացման իրական սպառնալիքի առջև: Նոր աշխարհակարգն իր բազմաշերտ տեղեկահաղորդակցական խաղային տեխնոլոգիաներով պարբերաբար ծնում է անորոշության, անտարբերության, ագրեսիվության, անպատասխանատու վարքի, թատերականացված գործողությունների օջախներ: Գլոբալ մարտահրավերները, բնական, մարդածին ու տեխնածին և տարաբնույթ այլ աղետները սպառնում են մարդու՝ որպես ցեղային տեսակի գոյությանը: Հոգևոր ճգնաժամի, սոցիալական կյանքի անկանխատեսելի փոխակերպումների, ավանդական արժեհամակարգի վիճարկման և մշակույթի զանգվածայնացման հարուցած տագնապներն աստիճանաբար ներթափանցում են կյանքի այլ ոլորտներ և կարող են դառնալ հավանական համամոլորակային աղետի պատճառ: Մեր ամբոխայնացած պատկերացումները մարդկությանը մոտեցրել են հոգևոր և համահանրային (սոցիետալ) արժեքների կորստյան անդունդի եզրին: Առաջընթացի ամեն քայլ մի այլ տեղ հետընթաց է նշանակում, և ներկա քաղաքակրթության բավականին կասկածելի պարտադրանքները

(ազգերի ինքնորոշման իրավունքի ստորադասումը տարածքային ամբողջականության սկզբունքին, ժողովրդավարության արտահանումը, համասեռամոլ զույգի կողմից երեխաների որդեգրումները, պարտադրյալ պատվաստումները և այլն) դրա լավագույն ապացույցն են: Որոշումները, որոնք սովորական ժամանակներում կարող են տարիների քննարկում պահանջել, ընդունվում են հաշված ժամերում: Ոչ հասուն և անգամ վտանգավոր տեխնոլոգիաներն արագորեն գործարկվում են, քանի որ ոչինչ չձեռնարկելու ռիսկերն ավելի մեծ են: Սոցիալական ու առողջապահական մեծածավալ փորձարկումների համար ժողովուրդները ծառայում են որպես փորձակենդանիներ: Սոցիալական փոխակերպումների և համաշխարհայնացման բացասական հետևանքների ծավալմանը զուգընթաց՝ ժամանակակից քաղաքակրթության համապարփակ ճգնաժամը ձեռք է բերում մարդաբանական նոր բնույթ, ուստի մարդու՝ որպես անկրկնելի կենսասոցիալական տեսակի գոյության ու շարունակականության, մարդու մարդ մնալու, նրա պատմական հեռանկարի ապահովման խնդիրները մշակութամարդաբանական իմաստով դառնում են առանցքային նշանակություն ունեցող կարևոր աշխարհայացքային հարցեր: Թվում է, թե արդի աշխարհում բոլոր արժեքների համեմատ գերակշռում են ապասրբազնացված, օգտապաշտական անհոգի հարաբերություններն ու նորմերը, գերիշխում են բնութենականից ու հոգեկանից կտրված, ոգեղեն լիցքավորումը կորցրած բանականությունը, գերվերացական-մեռյալ դատողականությունը:

Էկզիստենցիալ անորոշության իրավիճակում ընթացող հակասական, բազմաթիվ անհայտներով լեցուն և մարդու նախկին որակական որոշակիությունը կազմալուծող այս ցավոտ գործընթացը ժամանակակից ինտելեկտուալ ընտրանու շատ ներկայացուցիչներ բնութագրում են որպես մարդաբանական աղետ, մի իրավիճակ, երբ սոցիալական քաոսի պայմաններում մեկեն անհետանում են կեցության ավանդական վիճակները, փլուզվում է կայունության՝ սովորական դարձած համակարգը, կորսվում են կենսիմաստային ավանդական կողմնորոշիչները, «ոգու ոլորտում հայտարարվում է գործադուլ» (Թեյար դը Շարդեն), լայնորեն տարածվում է «ճգնաժամային գիտակցությունը» (Օսվալդ Շպենգլեր), մարդկությունը թևակոխում է գոյության ու գործառության ռիսկային գոտի (Ուլրիխ Բեկ):

Եվ այսու, տեխնոլոգիական աննախադեպ աճ արձանագրած արդի քաղաքակրթությունը էկզիստենցիալ ի՞նչ գին պետք է վճարի դրա դիմաց, ինչո՞վ և ինչպե՞ս է մարդը հատուցելու գայթակղություններով լեցուն ժամանակակից հաճոյաշատ, երբեմն ինքնահնար կենսակերպը վայելելու համար:

Մշակութամարդաբանական արդի խնդրակարգը համակողմանիորեն քննարկելու և վերլուծելու համար պետք է նկատի ունենալ ժամանակակից քաղաքակրթական կյանքն ու կենսակերպը բնութագրող հետևյալ հանգամանքները.

– պատմության զարգացման հետարդյունաբերական փուլում նախընտրելի է դառնում անցումը հասարակության ազատական-ժողովրդավարական տիպին համապատասխանող արժեքներին և արժեքային կողմնորոշումներին,

– շուկայական հարաբերությունների (որոնց գոյությունը բնական է տնտեսության մեջ և սոսկալիորեն անբնական՝ մարդկային կապերի մեջ) և սպառողական արժեքների ու հոգեբանության անարգել տարածման հետևանքով էապես փոխվում են մարդու ներաշխարհը, արժեքային և կենսիմաստային կողմնորոշիչները, հանուն օգուտի՝ «մեր օրերի այդ տխրահռչակ, լկտի ու դաժան կուռքի» (Պավել Ֆլորենսկի), փողի և հաջողության հասնելու անզիջում մրցավազքում զոհաբերելի են դառնում բարոյական արժեքները, ցանկացած ռեֆլեքսիա և անդրանցական (տրանսցենդենտալ) արժեք համարվում է ժամանակավրեպ և խորթ,

– հասարակության մեջ տեխնածին միջավայրի բուռն զարգացման հետևանքով փոխակերպվում են մարդու բնությունը, ֆիզիկական և հոգեկան հատկանիշների ողջ համակարգը, մարդու մեջ եղած բնականն աստիճանաբար արտամղվում է արհեստականի կողմից (անտրոպոգենեզը՝ որպես պատմական գործընթաց, չի ավարտվել, այն շարունակում է իր «ստեղծագործական» տրամաբանությունը),

– կեցության որոշարկված սոցիալական կապերի թուլացման, աստիճանական տրոհման, երբեմն էլ դրանց անհետացման հետևանքով խաթարվում է «ավանդական» հասարակության՝ մարդու կենսաշխարհին բնորոշ կոլեկտիվ կապերի և մտերմիկ ու ջերմ հարաբերությունների հարուստ համակարգը, «հասարակությունն անհատացվում է» (Զիգմունդ Բաուման), «անհատը լուծվում է անգիտակցականի, հասարակությունը՝ ամբոխի մեջ»[1]: Ժամանակակից մարդը հայտնվում է ինչպես հին (պատերազմներ, էկոլոգիական խնդիրներ), այնպես էլ նոր (անդրազգային ահաբեկչություն, կրոնական արմատականություն, կիբերհանցագործություն, համավարակ և այլն) գլոբալ մարտահրավերների առջև: «Առողջ ու պարզ բանականությունն ամենուրեք արտամղվում է դյուրագրգիռ, անհատակ, հիստերիկ, անգիտակից, ինտելեկտից և վերլուծության ունակությունից զուրկ վիճակով: Ամբողջ մարդկությունն ասես պատրաստվում է միաձուլվել մեկ դյուրահավատ, պարզունակ և իշխանատենչ հոգում, որն ունակ չէ ո՛չ մտածելու, ո՛չ սիրելու՝ պատրաստ լինելով միայն թպրտալու ու վայրագանալու, բայց առաջին հերթին՝ քանդելու: Չէ՞ որ ամբոխի նպատակը մեկն է՝ ոչնչացնել մշակույթը»[2]:

Այսօր մարդկությունն առերեսվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնց բովանդակությունն ըստ էության զուտ մարդաբանական է. հասարակության հյուլեացում, հումանիտար աղետներ, անբուժելի ուռուցքաբանական

---

[1] **Համվաշ Բ.,** Ջրհոսը / **Աթայան Էդ.**, Հոգի և ազատություն, Երևան, Սարգիս Խաչենց, 2005, էջ 565:
[2] Նույն տեղում, էջ 568:

և հոգեկան հիվանդություններ, մշակույթի զանգվածայնացում, տեղեկատվական բռնություն, սպառողական արժեքների գերիշխանություն, աղետային գիտակցության (վախի, տագնապի, ընկճախտի) տարածում, համահարթեցնող գլոբալ արժեքների գերակայության պայմաններում ազգային, կրոնական ինքնության անտեսում և այլն: Գաղափարի բռնությանը (ամբողջատիրությանը) հաջորդում է հետարդիական (պոստմոդեռնիստական) հասարակության ծնած դատարկության բռնությունը: Գերիշխող է դառնում սպառողական հոգեկերտվածքը: Սպառողական հոգեկերտվածքի տեր մարդիկ ընտրություն են կատարում ոչ թե առարկաների միջև, այլ պարզապես ներառվում են նշանների աստիճանակարգերում և սպառման ծածկագրերում: Սպառումն այլևս կապված չէ պահանջմունքների բավարարման հետ: Մարդը մշակութային իմաստի մատրիցում սպառում է ոչ թե ապրանք, այլ տարբերակիչ նշան, սոցիալական կարգավիճակ: Սպառումը դառնում է լեզու, բայց լեզու՝ առանց ռեֆերենտի: Սպառողը ընտրության ինքնավար կերպարից վերածվում է տարբերության և բացառման կառուցվածքը վերարտադրող նշանների համակարգի սոսկական օպերատորի[3]: Հետդասական մշակույթն ինքնատիպություն չի ստեղծում, այն գործում է որպես նախապատրաստված ռճերի, հղումների և գեղագիտական «փաթեթների» կոլաժ[4]: Սպառողական մտածելակերպը վերարտադրում է ազատության պատրանքը՝ պահպանելով խորհրդանիշային կարգի կառուցվածքային բռնությունը, որի դեպքում սուբյեկտը՝ որպես իրական ներկայություն, անհետանում է՝ իր տեղը զիջելով վերահսկվող և վերակարգավորվող սիմուլյատիվ դիմակին[5]:

Քաղաքակրթական գործառության ներկա փուլը բնութագրվում է այն բանով, որ անձի ազատության և պատասխանատվության սահմաններն ամփոփվում են անհատի հոգեսոմատիկ ամբողջականության մարմնական շրջանակներում: Սակայն, ի տարբերություն նախկին ժամանակների, մարմինն այլևս անձի նույնականացման միակ և ամենահաջող երաշխավորը չէ (գենային ինժեներիա, պլաստիկ վիրաբուժություն, օրգանների փոխպատվաստում և այլն): Մարմինը գոյաբանական էությունից աստիճանաբար վերածվում է մանիպուլյացիայի օբյեկտի, ճանաչողական կարողություններից և աշխարհի վերափոխման սուբստրատից փոխակերպվում է հոգատարության, սիրո և սիմվոլիկ պրակտիկաների առարկայի, սոցիալական սիմվոլիզմի քմահաճույքներին զոհաբերելի փորձադաշտի կամ գովազդային վահանակի (բոդիբիլդինգ, դոպինգ, պիրսինգ, սիլիկոնոպլաստիկա, դաջվածք, սեռափոխություն և այլն): Այն, վերածվելով տարատեսակ «հիգիենիկ ռեպլիկների» միջոցով իրականաց-

[3] Տե՛ս **Бодрийяр Ж.,** Общество потребления M., Издательство АСТ, 2021, էջ 138-143:
[4] Տե՛ս **Jameson**, Postmodernism, 1991, Duke University Press, էջ 17–25:
[5] Տե՛ս նույն տեղը, էջ 361-366:

վող բեմագրության (սցենարի), դառնում է «բթացնող հոգատարության օբյեկտ»[6], ավելի ճիշտ՝ պաշտամունքի առարկա: Մարդակենտրոն մշակույթը վերածվում է մարմնակենտրոն մշակույթի, հաղթանակում է «կռապաշտությունն իր առավել արատավոր ձևով՝ մարդու ինքնաերկրպագությամբ» (Թոյնբի): Քաղաքակրթական «արագացման» մրցավազքին մասնակցելու համար մարդը հատուցում է իր սեփական մարմնականությամբ, ինքնավարությամբ և սուբյեկտիվությամբ: Դա հանգեցնում է իրականի լիակատար անհետացմանը: Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն: Ըստ Բոդրիարի՝ մի փոխաբերության ժամանակակից քաղաքակրթությունը ոչ այլ ինչ է, քան նշաններ ու իմաստներ կրկնօրինակող վիրուս: Այն իրականություն չի ստեղծում, այն, ինչպես օրգանիզմում առկա վիրուսը, սոսկ ինքն իրեն վերարտադրում է: Փաստորեն, մարդաբանական հատուցումն այն գինն է, որը մարդը վճարում է քաղաքակրթական արմատական փոխակերպումներին (տեխնոլոգիականացում, թվայնացում, գլոբալացում և այլն) մասնակցելու համար: Սա ըստ ճաշակի և նախասիրությունների՝ մարմնի ֆիզիկական և գեղագիտական «կատարելագործման» նպատակով քաղաքակրթական արտադրության և մոդելավորման գլոբալ աշխատակարգերում ներառվելու, իր ինքնությունից, ընդոծին հատկանիշներից հրաժարվելու համար վճարված էկզիստենցիալ գինն է[7]: Միակ մտահոգությունն այլևս առողջությունը, սեքսուալությունը և բարետեսությունը ամեն գնով ապահովելն է: Ավանդական հասարակությունում մարմինը հոգու փոխաբերությունն էր, արդյունաբերականում՝ սեռի, հետարդիական հասարակությունում այն որևէ փոխաբերություն չի ներկայացնում, ուստի անիմաստ և անպարկեշտ է հոգու և հոգևորի մասին խոսելը: Սևեռուն մտահոգության առարկա է դառնում հետևյալ խնդիրը. եթե մարդու բնությունը և օրգանական մարմինը փրկելն անհնար է, ապա անհրաժեշտ է ստեղծել գիտակցության արհեստական կրիչ: Հասարակության դռները համառորեն թակում են նախկինում գոյություն չունեցած այնպիսի «անբնական» սուբյեկտներ, որոնց բարոյական կարգավիճակը անորոշ է, և, մեղմ ասած, չունեն սովորական մարդուն բնորոշ հատկանիշներով օժտված սոցիալականություն: Դրանք սոցիոտեխնիկական համակարգեր են, որոնք թեև մարդու ստեղծած ու նրան պատկանող կեցություններ են, բայց որոնց հանդեպ մարդը ոչ միայն գերազանցություն ու գերիշխանություն չունի, այլև ինչ- որ ժամանակ անց կարող է անգամ ինքնակամ հայտնվել այդ ոչ մարդկային սուբյեկտների ենթակայության տակ՝ հուսալով, որ սոցիալական գործողությունների այդ նոր գործակալ-

[6] Նույն տեղում, էջ 243-246:

[7] Տե՛ս **Бодрийяр Ж.,** Прозрачность зла. М.: Добросвет, 2001, էջ 87:

ների օգնությամբ երբևէ կարող է հասնել սուբյեկտիվությունից զուրկ «կիբեռնետիկական անմահության»[8]: Գիտության և կենսատեխնոլոգիաների բուռն զարգացման արդյունքում առաջանում է կլոնավորման, այսինքն՝ նախապես առաջադրված ծրագրով արհեստական պայմաններում մարդու բեղմնավորման ու աճեցման, մարդաբանական առնչությամբ սկզբունքորեն նոր ու աննախադեպ հիմնախնդիրը: Ինքնին հասկանալի է, որ վաղօրոք առաջադրված հատկություններով, «պատվերով» կառուցարկված մարդը սոցիոմշակութային և հոգևոր իմաստով որբ կլինի: Գենային ինժեներիայի տարատեսակ աշխատակարգերի աննախադեպ ու արագ զարգացման շնորհիվ սեփական մարմինն անընդհատ կատարելագործելու ոչ միշտ կշռադատված ցանկությունների բավարարման արդյունքում ժամանակակից մարդը կարող է հայտնվել իր նախաստեղծ բնության կորստյան իրական սպառնալիքի առջև, քանի որ այդ դեպքում կարող է վտանգվել մարդու՝ որպես անկրկնելի ցեղային տեսակի գոյությունն ու էկզիստենցիալ ամբողջականությունը: Դրա մարդաբանական հատուցումը արհեստականը բնականից, պարտադրվածը սեփականից, օտարը սեփականից տարբերելու անկարողությունն է:

Կեցության մեջ մշակութամարդաբանական իմաստով արմատավորված չլինելու հանգամանքը ծնում է անհետացող իրականության սոցիալ-հոգեբանական պարադոքսալ զգացողություն: Իրականության փոխարեն ձևավորվում է գերիրականություն (հիպերռեալություն) կամ վիրտուալ իրականություն, որտեղ արդեն այլևս էական չէ, թե ինչն է իսկապես իրական, ինչը՝ ոչ, որտեղ էական է միայն անվերջ հոսող լուրերի ու իրադարձությունների անընդհատությունը[9]: Գերիրականության մեջ դասական իմաստով փոխակերպումներ (ձևավորում, զարգացում, անկում) տեղի չեն ունենում: Բոլոր փոփոխությունները փոփոխությունների սիմուլյացիաներ են՝ միջերեսի (ինտերֆեյսի) թարմացումներ, գաղափարական փոխատեղումներ, տեսողական կոդերի փոփոխություններ: Մարդիկ այդ ամենը որպես էկզիստենցիալ աղետ չեն ընկալում, նրանց ինքնությունը, ցանկությունները, վախերը լուռ լուծարվում են թվային տեխնոլոգիաների սիմուլյացիոն համակարգերում: Մարդկությունը թևակոխում է զարգացման մի շրջան, երբ տեղեկատվական հոսքն անընդհատ մեծանում է, իսկ իմաստը՝ նվազում, տեղեկատվությունն իմաստ արտադրելու փոխարեն խաղարկում է այն, սկսում է «խժռել իր իսկ բովանդակությունը», հաղորդակցությունն ու իրական սոցիալականը[10]: Ժամանակի հետարդիա-

---

[8] **Հարությունյան Էդ.,** Սոցիալական կյանքի բեմականացման էկզիստենցիալ գինը՝ Մարդը գոյաբանական ծուղակում // Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն, 2024, Vol. 15, No. 3 , (45), էջ 13:

[9] Տե՛ս **Бодрияр Ж.**, В тени молчаливого большинства, или конец социального՝ Екатеринбург, 2000, էջ 19:

[10] Տե՛ս **Бодрияр Ж.**, Прозрачность зла. М., Добросвет, 2001, էջ 87:

կան ընթացքը մեկնաբանելու համար ստեղծվում է իրականի նենգապատկերը՝ պատրանք արտահայտող «կեղծանմանակ» (սիմուլյակր - Ժ. Բատայ) հասկացությունը, որն արտահայտում է օբյեկտի հանդեպ նշանի, բնօրինակի հանդեպ պատճենի գերիշխող արժեքն ու նշանակությունը: Ըստ Ժ. Բոդրիյարի՝ ժամանակակից աշխարհում մարդն ապրում է ոչ թե իրականության, այլ սիմուլյացիաների մեջ: Ըստ էության, քաղաքակրթության առաջընթացն ընկալվում է որպես սիմուլյացիաների առաջընթաց, իսկ փոխակերպումը՝ սիմուլյակրների մակարդակների փոփոխություն: Դրանք չորսն են.

1. պատկերը արտացոլում է իրականությունը (ավանդական հասարակություններ),

2. պատկերը աղավաղում է իրականությունը (արդիական (մոդեռն) հասարակություն),

3. պատկերը ձևացնում է, թե ինքն է իրականությունը ((պոստմոդեռն) հետարդիական հասարակություն),

4. պատկերը մոդելավորում է այլևս գոյություն չունեցող իրականությունը (գերիրականություն)[11]:

Վիրտուալ իրականությունում կյանքը մշտապես ծավալվում է որպես իրականության բնագրի բացակայությունը թաքցնող կեղծանմանակումների ու պատրանքների արարման սահմանազանցական շարժ: Ավելին, այդ նոր սոցիալականում կյանքի մտերմիկ ու ծանոթ համայնապատկերը ներկայացնող մարդիկ, կենցաղը, ճաշակը, նախապատվություններն ու այլևայլ մշակութային կարևոր մանրամասները կոնցեպտուալ իմաստով այնքան արագ ու հիմնովին են այլակերպվում, որ ուղղակի և փոխաբերական իմաստով մարդը վերածվում է տուն տանող ճանապարհին մոլորված ուղևորի[12]: Սոցիալական կեցության մեջ ամեն ինչ դառնում է սիմուլյատիվ: Մշակութային ավանդական իմաստների նկատմամբ քամահրական վերաբերմունքը, բառի հետ կամայական խաղը (Ժ. Դերիդա), «թարգմանության գոյաբանական հարաբերականությունը» (Ու. Կուայն) և «արմատական մեկնելիությունը» (Դ. Դևիդսոն) «ինտելեկտուալ ատլետների» ջանքերով (այսպես էին իրենց բնութագրում Ժ. Դերիդան և Ժ. Դըլյոզը) դառնում են հետարդիական փիլիսոփայության առաջատար թեմաները:

Ժամանակակից քաղաքակրթության գլխավոր գոյաձև է դառնում զանգվածային մշակույթը, որտեղ կարևորվում են մշակույթի այն հատկանիշներն ու որակները, որոնք համաշխարհայնացման արգասիք են: Մարդու բնութագրման գլխավոր ցուցանիշ է հռչակվում սպառումը, որը, աստիճանաբար ձեռք բերելով արժեքաբանական ենթատեքստ, դառնում է սոցիալական համակեցության կազմակերպման յուրահատուկ սոցիոմշակութային ծածկագիր:

---

[11] Տե՛ս **Бодрияр Ж.**, Симулякры и симуляция. М., Добросвет, 2000, էջ 5–9:

[12] Տե՛ս **Հարությունյան Էդ.,** նշվ. աշխ., էջ 14:

Մարդը դառնում է ոչ թե սոցիալական պատկանելության, այլ կենսաոճի ցուցանիշ: Զանգվածային մշակույթը ձևավորում է սպառողական արդի հասարակությանը բնորոշ հաղորդակցման, ինքնադրսևորման, կենսակերպի արտահայտման նշանային նոր համակարգ (պահվածք, հանդերձանք, սանրվածք, ճաշակ և այլն), որն ամբողջությամբ ծառայում է շուկայական քաղաքակրթության «գայթակղությունների գործարանի» գաղափարախոսությանը: Ցուցադրական սպառումն աստիճանաբար դառնում է մշակութային ընդհանուր նորմ, որին չենթարկվողը կանգնում է շրջապատից վտարվելու, մեկուսացվելու առջև: Ցուցադրական սպառման պարագայում ապրանքի փոխարեն նախևառաջ հանդես է գալիս ապրանքանիշը (արհեստականորեն ստեղծված կերպար), որի սոցիալական կարգավիճակն էլ որոշում է ապրանքի գինը՝ անկախ նրա արտադրության վրա ծախսված ջանքերից և նրա իրական սպառողական հատկություններից: Ըստ էության, բրենդը զանգվածային մշակույթի հասարակության պահանջներին հասցեագրված պատասխան ուղերձ է: Այս հասարակության մեջ ապրանքի արժեքը որոշվում է արտադրողի սոցիալական կարգավիճակով, այլ ոչ թե կարգավիճակը՝ արժեքով, ինչը բնորոշ էր դասական կապիտալիզմին: Ապրանքանիշի գնի բարձրացմանը ծառայում է գովազդը, որը ապրանքի կամ որևէ ընկերության համար համապատասխան կերպար է ստեղծում, և ավելի շատ շուկայում շրջանառում են հենց այդ ստեղծված կերպարները, քան իրական ապրանքները: Սա է պատճառը, որ գովազդային հոլովակներում իրերն առավել կատարյալ են երևում, քան դրանք իրականում կան: Որևէ ապրանքի գինը ձևավորվում է ոչ թե իրական տնտեսական օրենքների հիման վրա, այլ շուկայագետների և գովազդային գործակալների կողմից: Նրանք են ստեղծում ապրանքի կամ որևէ ընկերության «ապրանքանիշը» և հենց դրանից ելնելով էլ՝ սահմանում ապրանքի գինը: Սպառողական քաղաքակրթության պայմաններում հոգևոր արժեքներն աստիճանաբար կերպարանափոխվում են և դառնում ապրանքների խորհրդանիշային պատկեր, այսպես կոչված՝ «իմիջ»: Մարդիկ հրաժարվում են «մեծ ինքնություններից», այսինքն՝ դադարում են իրենց նույնացնել որոշակի պետության, ազգի կամ էթնոսի, կրոնադավանաբանական խմբի հետ: Ձևավորվում է նեղ, սահմանափակ հայացքների ու ձգտումների տեր մարդկանց նոր խավ, որոնց համար նույնականացման հիմնական չափանիշ է դառնում հենց բրենդը: Ձգտելով արագորեն հարմարվել փոխակերպվող պայմաններին՝ մարդիկ սկսում են մերժել կայունությունն ու տևականությունը որպես բնականոն գոյության կարևորագույն պայմաններ: Ժամանակների միջև կարծես խզում է առաջանում, ուստի վարքի ավանդական մշտակաղապարներով անհնարին է «ապահովագրել սեփական ապագան»: Եվ քանի որ հեռահար նպատակներն այլևս պահանջարկ չեն վայելում, ապա հանուն արդյունքների անմիջական ստացման, հանուն «այստեղ և այս պահին» սկզբունքի՝ մարդը հրաժարվում է

հեռահար նպատակներից, ինչը, պարզունակացնելով գոյությունը, հանգեցնում է ինչպես սոցիալական, այնպես էլ անհատական կյանքի տրոհմանը, էկզիստենցիալ արժեզրկմանը: Մարդկային ինքնությունը եղելությունից վերածվում է «խնդրի»: Անհատական և սոցիալական կյանքի տարածաժամանակային դետերմինանտների կրճատումը նպաստում է անկայուն, առընթեր գաղափարների և արժեքների ձևավորմանը: Այս հանգամանքներն անխուսափելի են դարձնում տարանցիկ վարքը, որն ամենից առաջ դրսևորվում է որպես կենսական կարճատև նախագծերի վրա հիմնված ինքնաածրագրավորվող, ինքնահնար գործունեություն: Փիլիսոփայական մարդաբանության դասական եզրահանգումներն այլևս չեն բավարարում կենսիմաստային դիրքորոշումներին ներկայացվող պահանջները[13]: Հընթացս ձևավորվող նոր մարդաբանության արժեհամակարգում անձը հանդես է գալիս որպես հավերժական ճամփորդ, տիեզերական թափառաշրջիկ, տիպօրինական է դառնում դեռևս չիրացված, չնույնականացված «առանց հատկությունների» մարդը[14]: Նախկին արժեքագոյաբանական մարդուն գալիս է փոխարինելու արդիականության մանիպուլյատիվ արարողակարգային «անձ-նախագիծը», որն անընդհատ շտկում, սրբագրում է իր իսկ հեղինակած նախագիծը: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ ինքնակոչություն, և այս հանգամանքի հերքումը «կա՛մ մշակութային անմեղսունակություն է, կա՛մ կրկնակի ինքնակոչություն»[15]:

Բոլոր ժամանակներում միտքը ձգտել է մարդու հողաշեն բնությունն ազատագրել կայենական մեղքերից, եսամոլության, այլատյացության, գիշատչության հակումներից, սակայն այդ ջանքերը ոչ միշտ են հաջողությամբ պսակվել: Առաջադիմության պատմությունը մեծ մտածողները պատկերացրել են որպես մարդու նյութապաշտական ու վայրագ հակումների հաղթահարման, յուրատեսակ ինքնաբացասման ու ինքնաոչնչացման ընթացք: Սակայն մարդու և մարդկայինի աստիճանական անկումն այնքան ակնհայտ ու խորն է դարձել, որ մարդը ոչ միայն որպես անհատ, այլև որպես ցեղային տեսակ այլևս անբուժելի հիվանդ է, և այսուհետ կյանքի պատմության փոխարեն մարդիկ ստիպված են լինելու գրել հիվանդության պատմություն[16]: Մեր ժամանակների համար, երբ «գործարքն» ավելի կարևոր է դարձել, քան դրա համար վճարվելիք էկզիստենցիալ գինը, պայքարը մարդու և նրա մեջ նստած իր իսկ հակոտնյայի միջև մոտենում է իր սահմանային ձևերին, գլոբալ հակասություն է առաջանում մարդու արարչական էության և նրա ստեղծարար էության զարմանալի արդյունքների

---

[13] Տե՛ս **Гуревич П. С.,** Феномен деантропологизации человека // Вопросы философии, 2009, **նույնի՝** Классическая и неклассичесская антропология: сравнительный анализ Центр гуманитарных инициатив, М., СПб., 2018:

[14] Бытие в свободе, или проблема культурной идентичности человека в ситуации онтологического перехода // Человек. RU. Гуманитарный альманах, Новосибирск, 2006, № 2:

[15] Տե՛ս **Пригов Д. А.**, Самоидентизванство // Место печати. Журнал интерпретационного искусства, 2001, էջ 30:

[16] Տե՛ս **Кутырев В. А**., Человек XXI века: уходящая натура // Человек. 2001, № 1, էջ 9:

ու մշակութամարդաբանական առումով դրամատիկական, երբեմն ողբերգական հետևանքների միջև: Մարդը կարող է չհասկանալ նոր ու անծանոթ ուժերի էությունը, կարող է չկանխատեսել դրանց ազդեցության քաղաքակրթական, էկոլոգիական, մարդաբանական հնարավոր հետևանքները, սակայն նա դատապարտված է վաղ թե ուշ անձամբ հատուցելու իր ընդունած կամ չընդունած յուրաքանչյուր որոշման համար: Թե այդ պայքարն ինչպես կհանգուցալուծվի, ցույց կտա ապագան: Էկզիստենցիալ հատուցումն անխուսափելի է: Դասական մոդեռնիզացման երկրներում հսկայական ջանքեր են գործադրվում, որպեսզի վերականգնվեն ավանդական հասարակության արժեքները (սոցիալական պատասխանատվություն, աջակցություն և փոխօգնություն, հոգատար վերաբերմունք միմյանց և բնության հանդեպ և այլն), որոնք ժամանակին դրվել էին առաջադիմության քաղաքակրթական զոհասեղանին: Ուստի այն ամենի նկատմամբ սրտացավ և զգուշավոր վերաբերմունքը, ինչն առաջին հայացքից չի ներառվում արդիականության նախագծի մեջ, պետք է դառնա սոցիալական էկոլոգիայի իմպերատիվ արժեք: Եթե մարդկությունը ցանկանում է Երկիր մոլորակի վրա իր գոյության ժամկետը երկարացնել, ապա պետք է հրաժարվի բացարձակ էվոլյուցիոնիզմի մտասևեռումից ու սահմանափակելով լինելությունը՝ հանուն բնականի (մարդու հոգևոր- մարմնական ամբողջականություն) ու արհեստականի (վիրտուալ իրականություն, արհեստական ինտելեկտ) համազարգացման (կոէվոլյուցիայի) ու համագործակցության, գիտակցական ջանքեր գործադրի հօգուտ էկզիստենցիալ կեցության ամբողջականության պահպանման՝ երբեք չմոռանալով, որ «առանց տրանսցենդենցիայի էկզիստենցիան դառնում է ամուլ և անսեր դիվային ինքնակամություն»[17]: Մարդը պետք է հավատա, որ, հակառակ տեխնոկրատական ճակատագրապաշտության, հենց ինքն է ընտրում իր ապագան: Ուրեմն աշխարհի հանդեպ պետք է դրսևորել ոչ թե գիտապաշտական (սցիենտիստական), նյութապաշտական, առավել ևս զուտ օգտապաշտական, այլ մարդասիրական (հումանիստական), ֆենոմենոլոգիական, այսինքն՝ արժեքային վերաբերմունք: Որովհետև մարդկային գոյության իրական իմաստի ակունքն ու առանցքը մարդկության պատմության ընթացքում կուտակված և բազմիցս փորձարկված, մարդկային կեցության հարուստ բազմազանությունը ներկայացնող բազմադարյա մշակույթն է: Պատմության քառուղիներում մարդու մեջ մարդկայինի քայքայման, տարրալուծման դեմ պայքարի արդյունավետ և ամենահուսալի միջոցը համամարդկային հումանիստական մշակույթն է, որը սոցիալական միջավայրի անընդհատ բարենորոգման, հասարակական հարաբերությունների և սոցիալական ինստիտուտների հումանիզացման, սոցիալապես պատասխանատու պետության ընձեռած գործիքակազմով դառնում է արդար հասարակության ձևավորման միակ երաշխավորը: Արդիականության քաղաքական, սոցիալական, հոգեբանական տարատեսակ հանգամանքներից բեկված ու աղճատված, պարզունակացված ու հուսա-

[17] **Jaspers K.,** Vernunft und Existenz. Groningen, 1935, p. 48.

բեկ մարդը հումանիտար վերակենդանացման կարիք ունի: Հումանիտար վերակենդանացմանը կարող է նպաստել համամարդկային բարոյական համընդգրկուն արժեքների ոգեղեն ակունքների վրա հիմնված կրթադաստիարակչական համակարգի շարունակական զարգացումը, որտեղ համապատասխան միջավայրի ստեղծմամբ առանցքային նշանակություն պետք է տրվի ստեղծագործական, ըստ Էության, ինքնաարարչական հմտությունների ու կարողությունների զարգացմանը:

Սոցիալական աշխարհին արհեստածին է, ստեղծվել է մարդու կողմից և մարդու համար, և եթե մարդկանց կողմից ընդունելության չարժանանա, չունենա կենսական նշանակություն և էկզիստենցիալ հագեցվածություն, կկորցնի իր իմաստն ու գոյության անհրաժեշտությունը: Մարդու ընտրությունը միշտ վախճանաբանական հեռանկար ունի, քանզի մարդկային պատմության ընթացքը և նրա վերջաբանը կախված են այն բանից, թե նա ո՞ր ճանապարհով կգնա՝ կյանքի՞, թե՞ մահվան: Եվ քանի որ «մարդկային կեցությունն առաջին հերթին համագոյակցության կամք է» (Օրտեգա-ի-Գասետ), ապա վտանգված գոյությունը փրկելու համար պահն է սթափվելու: Ազատությունն այն պայմանական տարածքն է, որը գտնվում է մարդու իրավասության ներքո. ոչ մի կողմնակի ուժ, ո՛չ չար, ո՛չ բարի, առանց մարդու թույլտվության՝ չի կարող այդ տարածքը մտնել: Միայն մարդուց է կախված, թե նա ո՞ւմ թույլ կտա մուտք գործել իր ազատության այդ գոտին, ո՞ւմ թույլ կտա գործել, իսկ ավելի ճիշտ՝ համագործակցել իր հետ, Աստծո՞ւն, թե՞ սատանային:

Համընդհանուր բարեկեցության տրանսհումանիստական հասարակարգի կառուցումը մարդկությանը երբեք երջանկություն չի բերի, եթե այդպիսի բարեկեցության որոնումներն իրականացվեն մարդու հոգևոր պահանջմունքների ու ոգեղեն ակունքների և համակարգապահպան ավանդույթների ընդհանուր համատեքստից դուրս: Արտաքին աշխարհի նկատմամբ (և՛ բնական, և՛ սոցիալական) հսկայական իշխանության հասնելով՝ մարդն ինքն իր նկատմամբ նույնպիսի իշխանության դեռևս չի հասել: Ավելին, ինքն իրեն տիրապետելը դառնում է ավելի խնդրահարույց: Այսօր շատ են մարդուն դեպի անորոշ ապագա տանող, նրա կենսասոցիալական և էկզիստենցիալ ամբողջականությունը տրոհող տարատեսակ կործանարար ուժերը: Մտահոգիչ այս իրավիճակում փիլիսոփայական մարդաբանության ամենակարևոր ուղերձը պետք է լինի հետևյալը. օգնել մարդուն մարդ մնալ, հարազատ լինել թեկուզ ոչ կատարյալ, բայց սեփական բնությանն ու Էությանը և ոչ թե վերածվել դրանց կենսատեխնոլոգիական նմանակը ներկայացնող խեղաթյուրված նանոնմանակին: Սա է մարդու մարդկային ապագան փրկելու ուղին: Ժամանակակից գիտության և տեխնոլոգիաների անկասելի թվացող շարունակական առաջընթացն այսուհետ պետք է իրականացվի մարդու՝ որպես անկրկնելի ցեղային տեսակի պահպանմանը նպատակամղված սոցիալական, իրավական և բարոյագիտական նոր նորմերի ստեղծմամբ, որոնց միջոցով պետք է վերահսկել, իսկ հարկ եղած դեպքում՝ սահմանափակել մարդու սրբություն սրբոց բնությունն անհարկի արհեստական ներխուժման՝ սոցիոմշակութային իմաստով վտանգավոր փորձարկումներից, ըստ Էության՝

փրկել **Մարդուն՝** ***մարդուց***: Հաղթահարել մարդաբանական ճգնաժամն առանց հոգևոր բարենորոգման անհնարին է: Մարդկությունը կանգնած է աննախադեպ և որակապես նոր գիտական ու տեխնոլոգիական թռիչքի առջև: Պետք է հուսալ, որ այդ թռիչքը կնշանավորվի ոչ թե մարդաբանական ճգնաժամի հետագա խորացմամբ, որի հետևանքով մարդը պետք է ստիպված լինի իր տեղը զիջել գուցե գործառութային առումով ավելի կատարյալ, բայց հոգևոր առումով թերատ հետմարդուն, ինչ-որ կենսակիբեռնետիկական արարածին, այլ նոր ուղի կհարթի դեպի հոգևոր առումով անսահման ինքնակատարելագործման ընդունակ, ավանդույթի Ոգին գնահատող և պահպանող, ավելի Ոգեղեն, ամբողջական ու ինքնաբավ մարդու համար: «Եթե մտավոր զարգացումը և գիտելիքների ավելացումը,-նկատում է Էքհատ Թոլը,- չեն հակակշռվում գիտակցականության համապատասխան աճով, ապա դժբախտության և աղետի հնարավորությունը շատ մեծ է»[18]: Մի իմաստուն ասել է, թե ամեն բարիքի մեջ կա չարիքի բաժին, և ամեն չարիքի մեջ՝ բարիքի: Ժամանակն է իմաստուն դառնալու: - Մարդկությունը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ ընտրությունն անհրաժեշտ է, հետևանքը՝ անխուսափելի: Այսօրվա սխալը անուղղելի կարող է լինել, այսօրվա մեղքը՝ մահացու:

ГАГИК СОГОМОНЯН – ***Потребительский менталитет: Экзистенциальные соображения.*** **–** Цивилизация постепенно приближается к опасной грани, полной соблазнов, за которой влияние неконтролируемых сил может стать роковым для человека. Отсутствие культурно-антропологической укорененности в бытии порождает парадоксальное социально-психологическое ощущение исчезающей реальности. Вместо реальности формируется сверхреальность (гиперреальность) или виртуальная реальность, где не имеет значения, что реально, а что нет. Жизнь непрерывно разворачивается как трансцендентное движение по созданию симулякров и иллюзий, скрывающих отсутствие оригинала реальности. Духовные ценности постепенно трансформируются и становятся символическими образами товаров. Формируется новый слой людей с узкими и ограниченными взглядами и стремлениями, для которых основным критерием идентификации становится пренд. Человек отказывается от долгосрочных целей, что, упрощая бытие, приводит к экзистенциальной девальвации жизни. «Сделка» оказывается более значимой, чем экзистенциальная цена, которую за неё предстоит заплатить. В условиях современных цивилизационных трансформаций для сохранения экзистенциальной целостности необходимо отказаться от навязчивой идеи абсолютного эволюционизма, и, ограничив становление, приложить осознанные усилия к содействию соразвитию (коэволюции) естественного (духовно-телесной целостности человека) и искусственного (виртуальной реальности, искусственного интеллекта) - во имя сохранения целостности экзистенциального бытия.

Ключевые слова: *потребительский менталитет, тело, симулякр, виртуальная реальность, симуляция, гиперреальность, массовая культура, экзистенциальная целостность, экзистенциальная цена*

GAGIK SOGHOMONYAN – ***Consumer Mentality: Existential Considerations.*** **–** Civilization is gradually approaching a dangerous boundary, full of temptations, beyond which the influence

[18] **Թոլ Է.** , Ներկայի ուժը, Փիլիսոփայական դիտարկումներ: Թարգմանությունների ժողովածու / Թարգմ. **Վ. Ա. Միրզոյան,** Եր. , Մենկարկ, 2025, էջ 148:

of uncontrolled forces may prove fatal for humanity. The absence of cultural-anthropological rootedness in existence gives rise to a paradoxical socio-psychological sensation of a vanishing reality. In place of reality, a hyperreality or virtual reality takes shape, where it no longer matters what is real and what is not. Life unfolds as a transcendental movement of creating simulacrums and illusions that mask the absence of the original reality. Spiritual values gradually undergo transformation and become symbolic images of commodities. A new stratum of people with narrow and limited views and aspirations is being formed, for whom brand identity becomes the primary criterion of self-identification. Man relinquishes long-term goals, which, by simplifying existence, leads to an existential devaluation of life. The "deal" becomes more important than the existential price to be paid for it. In the context of current civilizational transformations, preserving existential integrity requires abandoning the obsession with absolute evolutionism and, by limiting being, making conscious efforts toward the co-development (coevolution) of the natural (the spiritual-bodily wholeness of the human being) and the artificial (virtual reality, artificial intelligence) - for the sake of preserving the wholeness of existential being.

Key words: *civilizational transformation, body, simulacrum, virtual reality, simulation, hyperreality, mass culture, existential integrity, existential price*

Էթիկայի վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ պահպանվել են հետազոտությանը վերաբերող էթիկական բոլոր պահանջները։

Շահերի բախման վերաբերյալ հայտարարություն
Հեղինակը հաստատում է, որ շահերի բախում առկա չէ։

References

Bodriyar Zh, Prozrachnost' zla, M., Dobrosvet, 2001 (in Russian).
Bodriyar Zh, Simulyakry i simulyatsiya, M., Dobrosvet, 2000 (in Russian).
Bodriyar Zh., Obshestvo potrebleniya, M., Izdatelstvo AST, 2021 (in Russian).
Bodriyyar Zh., V teni molchalivogo bol'shinstva, ili konets sotsial'nogo, Yekaterinburg, 2000 (in Russian).
Bytiye v svobode, ili problema kul"turnoy identichnosti cheloveka v situatsii ontologicheskogo perekhoda // Chelovek. RU. Gumanitarnyy al"manakh, Novosibirsk, 2006, № 2 (in Russian).
Gurevich P. S., Fenomen deantropologizatsii cheloveka // Voprosy filisofii, 2009 (in Russian).
Gurevich P. S., Klassicheskaya i neklassichesskaya antropologiya: sravnitel'nyy analiz, Tsentr gumanitarnykh initsiativ, M., SPb. 2018 (in Russian).
Hamvash B., Jrhosy // Atayan Ed., Hogi yev azatutyun, Yerevan, Sargis Khachents, 2005 (in Armenian).
Harut'yunyan Ed., Sotsialakan kyanki bemakanatsman ekzistentsial giny. Mardy goyabanakan tsughakum, Banber Yerevani hamalsarani. Pilisopayutyun, Hogebanutyun , 2024, Vol. 15, № 3 (45) (in Armenian).
Jameson, Postmodernism,1991, Duke University Press.
Jaspers K., Vernunft und Existenz. Groningen, 1935.
Kutyrev V. A., Chelovek XXI veka: ukhodyashchaya natura // Chelovek. 2001, № 1 (in Russian).
Prigov D.A., Samoidentizvanstvo // Mesto pechati. Zhurnal interpretatsionnogo isskustva, 2001 (in Russian).
Tolle E., Nerkayi uzhy, Pilisopayakan ditarkumner. Targmanutyunneri zhoghovatsu / Targm. V.A. Mirzoyan, Yer., Meknark, 2025 (in Armenian).